կապած դաշին հիման վերայ. բնակիչք բաց արին քաղաքի դռները նորա առջեւ, եւ նա դրեց այնտեղ մեկին կառավարիչ։ Այնտեղից նա գնաց Սամուսատ, ուր նա գտաւ Սաֆվան Ի. ալ-Մուատտալին եւ Հաբիբ Ի. Մասլամային քաղաքի առջեւ կանգնած. նոքա առած էին գիւղօրայք հանդերձ նոցա բերդերով, որպէս եւ Սամուսատի ամրոցները։ Իյադ խաղաղութիւն կապեց բնակչաց հետ՝ Ուռհայեցոց նուիրած դաշին հիման վերայ. ապա նա վերադարձաւ Ուռհայ, ուստից նա մեկնած էր։

Ինձ պատմել է Մուհամմեդ Ի. Սադ՝ ըստ Վակիդիի, Մամարի,[1] Զոհրիի աւանդութեան՝ թէ Միջագետքում ոչ մի հնութեան տեղի չմնաց, որ նուաճած չլինէր Օմար Ի. Խատտաբի ժամանակ Իյադ Ի. Ղանմ, այն է՝ Խառան, Ուռհայ, Ռաքքայ, Քարքիսեայ,[2] Մծբին[3] եւ Սինջար։[4]

Ինձ պատմել է Մուհամմեդ՝ Վակիդիի, Աբդուլռահման Ի. Մասլամայի, Ֆուրատ Ի. Սալմանի, Զաբիտ Ի. Հաջջի ասելով, թէ Իյադ նուաճեց Ռաքքայ, Խառան, Ուռհայ, Մծբին, Մայափարեկին[5], Քարքիսեայ եւ Եփրատի վերայ գտանուող աւաններր, քաղաքներր՝ խաղաղութեամբ, իսկ երկիրը՝ բռնութեամբ[6]։ Նոյն Մու-

---

1 Այս պատմագրի "Հայաստանի նուաճումն" երկը ցաւօք մեզ չէ հասել։

2 Հնոց Circesium, *Κιρκέσιον*.

3 *Νίσιβις* (Ptol.), *Νίσιβις*, *Νάσιβις*, *Νέσιβις* (Steph. Byz.), Nisibis (Amm. Marc.)

4 *Σιγγάρα* (Ptol. V.) *Σιγγάρα, πόλις Ἀραβίας πρὸς τῇ Ἐδέσσῃ* Steph. Byz.), Singara (Amm. Marc.), Sangarena (Sext. Ruf.).

5 Հայ մատենագրերի Նփրկերա կամ Մարտիրոսաց քաղաք ի Դոփս։ *Μαρτυρόπολις* (Gelzer, Georgii Cyprii descriptio orbis romanis, 911)։

6 Մեծ քաղաքներին նուիրած "ապահովութեան" պայմաններում ոչ մի խօսքով չի յիշի նոցա ջրվակայ գիւ-